

Էկոհամակարգային ծառայություններ

Որո՞նք են էկոհամակարգային ծառայությունները

Էկոհամակարգային ծառայությունները այն օգուտներն են, որոնք մարդիկ ստանում են էկոհամակարգերից: Դրանք ներառում են ռեսուրսների (օրինակ՝ մաքուր ջրի, սննդի, փայտի, մանրաթելի) ստացման հետ կապված ծառայություններ, կանոնակարգող ծառայություններ (ջրի հոսքերի վերահսկում, էրոզիայի կանխարգելում, կլիմայի կանոնակարգում), մշակութային ծառայություններ (օրինակ՝ վերականգնման հնարավորություն, հոգևոր արժեքներ) և օժանդակ ծառայություններ (օրինակ՝ հողագոյացում, ջուր և ածուխի վերամշակում):

Տվյալ տարածաշրջանում էկոհամակարգային ծառայություններից մարդկանց կախվածությունն ու դրանց օգտագործման սահմանները հասկանալու նպատակով, Լիդիանը Գորայքում, Սարավանում, Գնդեվազում և Ջերմուկում կազմակերպում է շահագրգիռ կողմերի հարցումներ և ֆոկլուս խմբերի հետ հանդիպումներ, ինչպես նաև հանդիպումներ Խնձորեսկ գյուղի հովիվների հետ: Ընդհանուր առմամբ կախվածությունը էկոհամակարգային ծառայություններից բավականին բարձր է՝ հաշվի առնելով գյուղական ապրելակերպն ու աշխատանքի և կենսամիջոցների աղբյուր հանդիսացող ավանդական գյուղատնտեսության գերակշռումը:

Ուսումնասիրությամբ բացահայտված ամենակարևոր էկոհամակարգային ծառայություններն են՝ անասնաբուծության արտադրանքը, խոտը, ծիրանը, մաքուր ջուրը, էրոզիայի վերահսկումը, մշակույթն ու ավանդույթները (օրինակ՝ սեզոնային հովվությունը) և ինքնին բնապատկերը (ձևավորելով հստակ “տեղի զգացողություն”):



Որո՞նք են հնարավոր ազդեցությունները

Համապատասխան կառավարման բացակայության պարագայում առկա է սպառողներին մատուցվող էկոհամակարգային ծառայությունները Օրագրով պայմանավորված ազդեցություններին ենթարկելու ռիսկ:

Առկա է նաև մեկ այլ ռիսկ, որը կապված է էկոհամակարգային ծառայությունների մատուցման կրճատման հետ, քանի որ Օրագրի իրականացումը կախված է որոշ ծառայություններից, օրինակ՝ Արփա գետից ստացվող ջրից:

Հավանական ազդեցությունների կառավարմանն ուղղված Ընկերության քայլերը

Տեղացի բնակչության կողմից էկոհամակարգային ծառայություններից ստացվող ֆինանսական օգուտների մասով Օրագրային ազդեցությունների խնդիրը լուծվելու է Հողի ձեռքբերման և կենսակերպի վերականգնման պլանով (ՀՁԿԳՊ)-ով սահմանված կարգով: Սա մասնավորապես վերաբերում է այն դեպքերին, երբ ծիրանի աճեցման համար օգտագործվող հողն անհրաժեշտ է դառնում Օրագրային ենթակառուցվածքների համար և որտեղ արոտավայրերի հասանելիությունը որոշակիորեն սահմանափակվում է Օրագրի պատճառով:

Անգամ ՀՁԿԳՊ-ի իրականացման պարագայում, Լիդիանն ընդունում է էկոհամակարգային ծառայությունների վրա ազդեցությունների հնարավորությունը, ինչը բավականին դժվար է կանխատեսել: Հիմնական անորոշությունը կապված է հովիվների և հողագործների համար բավականաչափ արոտավայրերի և մարգագետնային տարածքների հասանելիություն ապահովելու հետ: Լիդիանը պատրաստվում է վերահսկել այս գործընթացը Օրագրի իրականացման ողջ ընթացքում և, անհրաժեշտության դեպքում, ձեռնարկել մեղմացող միջոցառումներ:

Մշտադիտարկման ծրագրի կարևորագույն տարրերից է շարունակական համագործակցությունը բոլոր շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ հովիվների հետ: Սա նախատեսվում է իրականացնել Օրագրի Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանի համաձայն: